

## **ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՓՈՐՁԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ**

### **1. Տնտեսական ճգնաժամերի մասին տրամադրությունների հոլովություն**

2008թ. ամռանից Ամերիկայի Միացյալ Նահանգներում, իսկ հետո նաև՝ Եվրոպայի ու հարավարևելյան Ասիայի երկրներում սկսված ֆինանսատնտեսական ճգնաժամը իր խորությամբ և ընդգրկման մասշտաբներով, հարվածի ուժով ու հեռահար հետևանքներով իրավացիորեն համեմատվում է 1929-33 թթ. «Մեծ դեպրեսիայի» հետ: Ինչպես անցյալ դարի 30-ական թվականներին, այժմ էլ «տնտեսական ցունամի» ընդգրկել է ողջ համաշխարհային տնտեսությունը, հանգեցրել է ֆինանսական, տնտեսական, տեխնոլոգիական ու արտադրական լուրջ կորուստների ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող և անցումային երկրներում: Ճգնաժամի հարվածներից զերծ չի մնացել նաև Հայաստանի Հանրապետությունը: Անցումային շրջանի համակարգային կերպավորման փուլում գտնվող երկրի համար, որը նաև լուրջ տարածաշրջանային խնդիրներ ունի, ճգնաժամը լրջագույն մարտահրավեր է: Նման իրավիճակում թե՛ հասարակության և թե՛ քաղաքական որոշումներ կայացնող ընտրախավերի համար սկզբունքային հարց է ճգնաժամի բնույթի ու հնարավոր ներգործությունների կանխատեսումը և նրանից բխող վտանգների հաշվառումը՝ քաղաքական, գործարար ու վարչական որոշումների ընդունման ընթացքում:

Առհասարակ, տնտեսական ճգնաժամի՝ որպես տնտեսական համակարգերի շարժընթացի որոշակի փուլի, ըմբռնումը նոր երևույթ չէ: Տնտեսական ճգնաժամերը, որոնք քիչ թե շատ հստակ պարբերականությամբ սկսեցին ի հայտ գալ տակավին 19-րդ դարի 20-30-ական թվականներին, ժամանակի ընթացքում դարձել են տեսաբան-հետազոտողների ուսումնասիրությունների առանցքային հիմնահարցերից մեկը: Խնդիրը դիտարկվել է առավել լայն՝ տնտեսական շրջափուլերի կամ պարբերաշրջանների քննարկման համատեքստում: Ընդ որում, տնտեսական շրջափուլերի դրսևորման օրինաչափությունների ամբողջական ըմբռնումը երկու հարյուրամյակների ընթացքում հետազոտողների հայացքներում կատարված տևական փոփոխությունների արդյունք է:

Սկզբնական շրջանում հետազոտողները տնտեսական շրջափուլի մասին իրենց նախնական՝ տեսական պատկերացումներում դիտարկում էին նրա առավել ակնառու և տեսանելի հանգրվանը՝ ճգնաժամը: Ընդ որում, վերջինս ընկալվում էր որպես ոչ օրինաչափ և պատահական երևույթ: Ավելին, ճգնաժամի մեջ սկզբնական շրջանի հետազոտողները միայն աղետ էին տեսնում: Միայն հետագայում՝ Կլեմենտ Ժուգլյարի հետազոտություններով հիմնավորվեց, որ ճգնաժամերը հանդես են գալիս օրինաչափորեն և ունեն որոշակի պարբերականություն՝ 8-12 տարի: Մակայն դրանից հետո հետազոտողներից մի քանի տասնամյակ պահանջվեց՝ ընդունելու համար այն փաստը, որ ճգնաժամը սոսկ գործարար ակտիվության տատանման մի փուլ է, և, որ գոյություն ունեն նաև շրջափուլի այլ բաղադրիչներ: Թերևս այսպիսի մոտեցումը ամբողջական ձևով հաստատվեց 20-րդ դարի առաջին քառորդում: Մասնավորապես, տնտեսագիտական գրականության մեջ լայն տարածում ստացան այնպիսի հասկացություններ, ինչպիսիք էին «Կիչինի» կամ «Կուզնեցի» շրջափուլերը<sup>1</sup>:

20-րդ դարի 20-ական թվականների վերջը տնտեսական շրջափուլերի և ճգնաժամերի ուսումնասիրության նոր հանգրվան բացեց՝ «շնորհիվ» «Մեծ դեպրեսիայի»: 1929թ. զարգացած երկրներում ծայր առած տնտեսական աննախադեպ անկումը և վերելքը ապրող տնտեսությունների կազմալուծումը հարկադրեցին վերանայել շուկայի ինքնաբերական ինքնակարգավորման ու ազատական տնտեսության կենսունակության վերաբերյալ ավանդական դրույթները: Անգլիացի տեսաբան Ջոն Մեյնարդ Բեյնսի ուսումնասիրությունները այս առումով նոր հայացք էին տնտեսության և տնտեսական քաղաքականության հանդեպ<sup>2</sup>: Այնուհայտ էր, որ 1929-1933թթ. «Մեծ դեպրեսիայի» իրողությունները ոչ մի կերպ չէին տեղավորվում ազատ մրցակցային շուկայի տրամաբանության շրջանակներում: Շուկայի «անտեսանելի ձեռքի» գործողությունը ամենևին էլ տեսանելի չէր, այսինքն՝ շուկան ինքնին ի վիճակի չէր վերականգնել խախտված տնտեսական համամասնությունները: Այդ պատճառով քաղաքականություն մշակողներին ու քաղաքական գործիչներին ուղղված Ջ.Մ.Բեյնսի հիմնական «հակաշրջափուլային դեղատոմսը» հանգում էր տնտեսության մեջ պետական կարգավորման դերի կտրուկ ավելացմանը:

Ըստ էության՝ քեյնսյան հանձնարարականների հիման վրա ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը սկսեց իրականացնել իր այսպես կոչված՝ «Նոր կուրսը», ինչը ԱՄՆ-ը կարճ ժամանակահատվածում դուրս բերեց խորագույն տնտեսական ճգնաժամից: Թերևս այդ հանձնարարականներին հետևեցին նաև Արևմուտքի մյուս զարգացած երկրները: Մակայն ասել, որ այդ ամենի գործադրումով լուծվեց շուկայական տնտեսության ալիքաձև կամ շրջափուլային զարգացման հիմնախնդիրը, իհարկե, սխալ կլինի, քանզի ճգնաժամն առհասարակ, օրգանապես բնորոշ է կապիտալի ու շահույթի վրա հիմնված տնտեսական համակարգին: Պարզապես, ժամանակի ընթացքում, ազգային տնտեսական համակարգի բարդության աստիճանի բարձրացմանը, ինչպես նաև՝ տնտեսության միջազգայնացմանը զուգահեռ, ազգային տնտեսության ցնցումները նոր որակներ և դրսևորումներ են ձեռք բերել:

Դեռևս անցյալ դարի 30-ական թվականներին հետազոտողների մի խումբ համոզված էր, որ տնտեսական մեծ ցնցումները տնտեսական համակարգերի ավելի երկար տատանումների՝ «կոնյունկտուրային մեծ ալիքների» փուլերից մեկն են, ուստի, քաղաքականություն մշակողները իրենց որոշումներում պետք է հաշվի առնեն այդ օրինաչափությունը:

<sup>1</sup> Stiu Nelson R. The Rate and Direction of Inventive Activity Economic and Social Factors. Princeton. 1962. P. 32.

<sup>2</sup> Stiu Д.М. Кейнс, Общая теория занятости процента и денег, М.1982 г.

Մասնավորապես, այդ տեսակետին էր ռուս հանրահայտ տնտեսագետ-վիճակագիր Նիկոլայ Կոնդրատևը<sup>3</sup> : Ըստ Ն. Կոնդրատևի, տնտեսության զարգացումը ենթակա է 45-50 տարվա տևողությամբ, այսպես կոչված, «կոնյունկտուրային մեծ շրջափուլերի»՝ երկար ալիքների ներգործությանը: Ընդ որում, յուրաքանչյուր շրջափուլից հաջորդին անցման նախօրեին տեղի են ունենում սկզբունքային փոփոխություններ հասարակության տնտեսական, քաղաքական և սոցիալական հարաբերություններում:

Ըստ Ն.Կոնդրատևի, յուրաքանչյուր մեծ շրջափուլի «բարձրացող ալիքի» ժամանակահատվածում տեղի են ունենում տեխնոլոգիական, քաղաքական, սոցիալական, և ինստիտուցիոնալ լուրջ փոփոխություններ: Որպես կանոն, այդ շրջանում երկրները ներքաշվում են երկարաժամկետ կառուցվածքային ճգնաժամերի մեջ: Ավելի ուշ կատարված հետազոտությունները ցույց էին տալիս, որ «կոնդրատևյան ալիքներով» նկարագրվող զարգացումները, առանձին շեղումներով, սկիզբ են առնում 18-րդ դարի արդյունաբերական հեղաշրջումից: Արևմուտքի տեսաբանները Ն.Կոնդրատևի մշակած տեսական դրույթներից շատերը դարձրին իրենց գիտական հետազոտությունների անկյունաքարը:

Այդուհանդերձ, անցյալ դարի 40-60-ական թվականներին, երբ բավականաչափ հարգի էին, և կարելի էր ասել՝ համընդգրկուն բնույթ էին կրում մակրոտնտեսական կայունության և հավասարակշռության քեյնսյան գաղափարները ու դրանց հետ կապված՝ տնտեսության կարճաժամկետ կարգավորման խնդիրները, երկարատև տնտեսական շրջափուլերի վերաբերյալ եղած գիտական վարկածները ետին պլան մոդելին: Թվում էր, թե քեյնսյան հանճնարարականների իրագործմամբ գտնվել են այն «բուժիչ դեղատոմսերը», որոնք կարող են սպեղանի դառնալ շարունակական ցնցումների ու անկայունության մեջ գտնվող դրամատիկական տնտեսության համար:

Սակայն անցյալ դարի 70-ական թվականների կեսերից, ավելի ստույգ՝ 1974-75թթ. սկսած, երբ երկարաժամկետ կառուցվածքային ճգնաժամը ցնցեց Արևմուտքի զարգացած տնտեսությունները, ակնհայտ դարձավ, որ առկա իրողություններն իրենց ընդհանուր բնութագրիչներով հանդերձ, խիստ որոշակի պատմական նմանակներ ունեն: Այս պայմաններում, փաստորեն, կրկին վերակենդանացավ «երկար ալիքների» վարկածը ու մի շարք հետազոտողների հետևողական ջանքերով դարձավ ամբողջական գիտական հայեցակարգ: Ըստ ճգնաժամագիտության արդի ըմբռնման՝ համակարգային ճգնաժամերը կարելի է պայմանականորեն դասակարգել երեք խմբի՝ **ժրջափուլային ճգնաժամեր**, **կորդինացիոն ճգնաժամեր**, **կառուցվածքային ճգնաժամեր**: Դիտարկենք դրանք առանձին-առանձին:

## 2. Ծրջափուլային (ցիկլային) ճգնաժամեր

Ծրջափուլային ճգնաժամը անսպասելի չի սկսվում, այն որոշակիորեն կարգաբերված-պատճառաբանված է և առնչվում է տնտեսական համակարգում նախկինում կատարված զարգացումների հետ: Ծգնաժամի այս տիպի դեպքում տնտեսական համակարգի քանակական բնութագրիչ մեծությունների (պարամետրերի) կարգում և վերահսկողական կառուցվածքում, ըստ էության, ոչինչ չի փոխվում: Փոխվում են սոսկ բնութագրիչ մեծությունների արժեքները: Սակայն դրանք կատարվում են անընդհատ՝ չզերազանցելով

<sup>3</sup> St'u H.Д.Кондратьев. К вопросу о понятиях экономической статики, динамики и конъюнктуры. Проблемы экономической динамики. М. Экономика, 1989, с. 48-75.

թույլատրելի սահմանաչափերը: Այդ իմաստով, շրջափուլային փոփոխությունների որոշակի բեկունային (կրիտիկական) փուլերը կարելի է որպես ճգնաժամ որակել: Շրջափուլային ճգնաժամների դեպքում, օրինակ, որոշակի փոփոխություններ են կրում տնտեսության մակրոցուցանիշները՝ տնտեսական աճը, գնաճը, ներդրումների և խնայողությունների ծավալները, արտահանման և ներմուծման, բյուջեի և արտաքին առևտրի ցուցանիշները և այլն: Սակայն այդ փոփոխությունները շրջափուլային ճգնաժամների դեպքում երկարաժամկետ հատվածում կարող են դուրս չգալ թույլատրելի սահմաններից:

Շրջափուլային ճգնաժամների դեպքում, անկախ նրանից, թե ինչպիսին է նրանց ընթացքն ու տևողությունը, մշտապես առկա է հավելյալ ներդրումների իրականացման, սարքավորումների արդիականացման, նոր պահանջներին համապատասխանող աշխատանքային ներուժի ձևավորման պահանջ: Միաժամանակ, տվյալ փուլում խճճված են կյանքի և սպառման սովորույթները, և առկա են այնպիսի խաբուսիկ ակնկալիքներ, թե իբր՝ հնարավոր է իրավիճակի փոքր ճշգրտումներով կամ բարեփոխումներով առաջ շարժվել: Այդուհանդերձ, մեծան կենկալիքները պատրանքային են, քանի որ ձևավորված արտադրական տեխնոլոգիաների և դրանց հիման վրա ստեղծված արդյունաբերական կառույցի պայմաններում, երբ ձեռք է բերվում շուկայի հագեցման գազաթնակետը, հետագա աճն այլևս անհնար է:

Տնտեսական աճի խաթարման կամ այլ կերպ՝ «աճի ճգնաժամի» մասին կարելի է խոսել, երբ բազմաթիվ հավասարաթեք կարողականություն ունեցող արտադրական բնորոշները սպառում են իրենց աճի ռեսուրսները, երբ տնտեսության բազմաթիվ հատվածներում աշխատուժը թերբեռնված է, երբ ձեռնարկությունները հին տեխնոլոգիական հենքի վրա դառնում են ուռճացված և իներտ ու, փաստորեն, անընդունակ են ժամանակին սկսելու տեխնոլոգիական նորամուծությունները: Բացի այդ, դրան նպաստում է նաև պետությունը, երբ իր հերթին՝ լրավճարների միջոցով օժանդակում է հնացած կամ ավանդական արտադրական ու տեխնոլոգիական կառույցը:

Նկատենք, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում շրջափուլային ճգնաժամի առանձին տարրերը որոշակիորեն նկատվում են: Տնտեսական աճը հասել է իր գագաթնակետին, ու այլևս հնարավոր չէ առկա ռեսուրսների պայմաններում այն նույն սահմաններում ապահովել: Ընդհակառակը, վերջին մեկ տարվա ընթացքում տեղի է ունեցել տնտեսական աճի անկում: Մինևույն ժամանակ լուրջ փոփոխություններ են կրել ՀՀ տնտեսության մյուս մակրոցուցանիշները. նախկինում առկա շատ թույլ ու չափավոր գնաճի (3-5 տոկոս) փոխարեն այժմ գնաճը մոտեցել է երկնիշ թվի սահմանագծին և նույնիսկ գերազանցում է այն, տեղի է ունեցել արտաքին ու ներքին ներդրումների շեշտակի անկում: Մյուս կողմից՝ արտադրական հզորությունները մնում են թերբեռնված, խիստ բարձրացել է գործազրկության մակարդակը: Հատկապես դա տեսանելի է ու ցավազին այն աշխատողների շրջանում, որոնք նախկինում աշխատում էին Ռուսաստանի Դաշնությունում և իրենց վաստակած միջոցների առյուծի բաժինը ուղարկում Հայաստանում ապրող իրենց ընտանիքներին:

Հայաստանի տնտեսության մեջ շրջափուլային ճգնաժամի դրսևորման մեկ այլ իրողություն է այն, որ խորհրդային ժամանակներից ժառանգված տեխնոլոգիական կառուցվածքներն ու հզորությունները նորացնելու հնարավորությունները շատ սահմանափակ են, իսկ մյուս կողմից՝ հնացել ու արդի պահանջներին չեն բավարարում նախկինում նրանցում

աշխատող և այժմ գործազուրկների վերածված աշխատողների՝ կառավարիչների, ինժեներների և բանվորների գիտելիքներն ու հմտությունները:

### 3. Կառուցվածքային ճգնաժամեր

Երբ աճի կամ շրջափուլային ճգնաժամն ամբողջությամբ «պարպել է» իր ներուժը, այսինքն՝ երկարաժամկետ իմաստով տնտեսությունը ընկղմվել է անկման կամ լճացման (դեպրեսիայի) փուլի մեջ, ապա անխուսափելի է կառուցվածքային ճգնաժամը: Ակնհայտ է, որ նման իրավիճակում արդեն զարգացումը չի կարող ընթանալ ըստ աճի նախկին հարացույցի (մոդելի): Այս նոր փուլում արդեն անհրաժեշտ է ձևավորել սկզբունքորեն այլ արտադրատեխնոլոգիական, կազմակերպական և ինստիտուցիոնալ (հիմնարկային) ենթակառույց՝ հիմնված նորամուծությունների և արդիական գիտելիքների համակարգի վրա:

Կառուցվածքային ճգնաժամի դեպքում, որպես կանոն, տնտեսական համակարգի կառուցվածքը կազմալուծվում է, երբ նրա մեկ կամ մի քանի բնութագրիչները գերազանցում են թույլատրելի սահմանաչափերը: Փաստորեն, տեղի է ունենում համակարգի մակրոտնտեսական կայունության տևական խախտում: Այս իրավիճակը սովորաբար հանգեցնում է կառավարության և տնտեսության ձեռնարկատիրական հատվածի միջև լուրջ հակասությունների ու տարաձայնությունների: Կառուցվածքային ճգնաժամերը նկարագրվում են, այսպես կոչված, Կոնդրատևյան շրջափուլերով, որոնց հիմքում ընկած են նոր տեխնոլոգիայի զարգացումը և դրանով պայմանավորված՝ ուժանյութային ու հանքահումքային բազայի փոփոխությունը: Իր հերթին՝ ուժանյութային և հումքային համապատասխան ռեսուրսների անբավարարությունը լուրջ ազդակ է դառնում նոր, ավելի ռեսուրսախնայողական տեխնոլոգիայի ստեղծման ու ներդրման համար: Կոնդրատևյան յուրաքանչյուր ալիք հիմնված է որոշակի «հենքային տեխնոլոգիայի» վրա, ինչը ենթադրում է որոշակի էներգետիկ ռեսուրսի և հումքի գերակշռող (որոշիչ) տեսակի օգտագործում: Յուրաքանչյուր հենքային տեխնոլոգիա պայմանավորում է նաև որոշակի հասարակական-ինստիտուցիոնալ և քաղաքական համակարգի առկայություն, աշխատանքի կազմակերպման ձևեր, համապատասխան ենթակառույցներ, ինչպես նաև՝ ապրելակերպի և սպառման որոշակի չափասահմաններ (ստանդարտներ): Նույնիսկ որոշ տեսաբաններ հակված են Կոնդրատևյան շրջափուլի գործողության հետ կապել քաղաքական համակարգի տիպը (ժողովրդավարական, ավտորիտար, ամբողջատիրական և այլն) և գործադիր իշխանության գործառնության հարացույցները:

Կոնդրատևյան ալիքներից յուրաքանչյուրը որոշակի ժամանակաշրջանից հետո բախվում է կամ էներգիայի և հումքի որոշիչ աղբյուրների սահմանափակությանը, կամ բնապահպանական հիմնախնդիրների կուտակմանը, կամ հոգեբանական շարժառիթների (մոտիվացիաների) սպառմանը, քանզի նոր իրավիճակում տվյալ ալիքը սպառողական հատկությունների առումով բարելավված ու ավելի էժան բարիքներ այլևս ի վիճակի չէ առաջարկել՝ արդեն ոչ շահավետ դարձած ոլորտում ներդրումների ավելի ու ավելի նվազող գրավչության պատճառով: Դիտարկումները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր նման ալիք տևում է միջին հաշվով 45-50 տարի և հաջորդաբար անցնում է չորս փուլերով՝ վերելքի, հատունության, անկման և լճացման: Այդուհանդարձ, հնարավոր է, որ ալիքների տևողությունը կամ անցումները տեխնոլոգիական զարգացման, քաղաքական հակասու-

թյունների, ներքին կամ արտաքին ազդակների (պատերազմներ, հումքային, օրինակ՝ նավթային, մենաշնորհներ) ներգործությամբ երկարաձգվեն կամ կրճատվեն:

Կառուցվածքային ճգնաժամը, փաստորեն, առկա է, երբ մի կողմից հնացած տեխնոլոգիայի ու դրանով պայմանավորված հին կազմակերպական կառույցների կամ կենսական սովորույթների հենքի վրա այլևս անհնար է արտադրողականության հետագա աճը և նոր շուկաների ստեղծումը, մյուս կողմից՝ դեռևս չեն կարողացել լիովին հաստատվել նոր հենքային տեխնոլոգիաները և դրանցով պայմանավորված՝ ինստիտուցիոնալ-կազմակերպական ձևերը: Ըստ Վ.Ռոսթոուի եւ Ի. Վան Դյուինի<sup>4</sup>, առաջին Կոնդրատևյան ալիքը ընդգրկում է 1792-1845 թվականները: Այն հիմնված էր մեխանիկական արդյունաբերականացման, ֆաբրիկա-գործարանային աշխատանքի կազմակերպման և շոգեմեքենայի զանգվածային կիրառության վրա, որոնց հիմնական հումքատեսակները չուգունը և քարածուխն էին:

Կոնդրատևյան երկրորդ ալիքը (1848-1896թթ.), ըստ տեսաբանների, պողպատի արտադրության տեխնիկական կատարելագործման և շարժական շոգեմեքենայի միջոցով հնարավոր դարձրեց երկաթուղու և շոգեմեքենայի աշխատանքը, ինչպես նաև բարձրացրեց քաղաքակենտրոնացման մակարդակը՝ շնորհիվ բարձրահարկ շենքերի շինարարության: Տեղի ունեցավ նաև բնակչության մեծ ծավալներով միգրացիա Եվրոպայից դեպի Ավստրալիա և ԱՄՆ: Փաստորեն, երկրորդ ալիքը արդյունք էր 1830-ական թվականներից արձանագրված քարածխի հումքի անբավարարության<sup>5</sup>:

Կոնդրատևյան երրորդ ալիքը, ըստ Ա.Քլայնքնեխտի (1896-1933թթ.), կապված էր որոշակի արտաքին գործոնների, մասնավորապես՝ Առաջին համաշխարհային պատերազմի ներգործության հետ և այդ պատճառով որոշակիորեն կարճ տևեց<sup>6</sup>: Այս ալիքի գլխավոր տեխնոլոգիական հենքը էլեկտրականության կիրառությունն էր, ինչպես նաև՝ նավթի և քարածխի վերամշակման արդյունքները որպես վառելանյութ օգտագործող ներքին այրման շարժիչի գործադրումը: Այս նորամուծությունների շնորհիվ հնարավոր դարձավ արտադրության հագեցումը մեքենայական հաստոցներով և զանգվածային արտադրության կազմակերպումը ոչ միայն տեքստիլ, կոշիկի և գրամեքենաների, այլև ավտոմեքենաների թողարկման բնագավառում: Թեև երկու համաշխարհային պատերազմներն էլ էապես նպաստեցին պողպատի արտադրության ծավալների բազմապատիկ աճին, այդուհանդերձ, տեխնիկական առաջընթացը և ազգային տնտեսությունների ռազմականացումը պահանջում էին այլ մետաղական հումքատեսակների՝ ալյումինի և համաձուլվածքների կիրառության էական ընդլայնում: Կոնդրատևյան այս ալիքը ավարտվեց 1929-33թթ. աննախադեպ ճգնաժամով:

Դրանով իսկ սկսվում էր Կոնդրատևյան չորրորդ ալիքը (1933-1974թթ.): Սովորաբար այն կոչվում է «Ֆորդիզմի» ժամանակաշրջան: Այն հիմնված էր օրգանական քիմիայի և արհեստական հումքով աշխատող արդյունաբերության, կառավարման տեխնիկայի, էլեկտրոնիկայի, ավտոմոբիլաշինության, ինքնաթիռաշինության և հրթիռաշինության, միջուկային էներգետիկայի, ինչպես նաև առաջին մի քանի սերնդի հաշվողական տեխնիկայի կիրառության վրա: 1930-70-ական թվականներին այդօրինակ տեխնոլոգիաների կիրա-

<sup>4</sup> Stü Rostow W.W. Kondratieff, Schumpeter and Kusnetz: Trend periods revisited/Journal of economic history.N.Y.1975. Vol 35. N.4. էջ 716-754: Duijn J.J. van. De Wiekheid over Kondratieff/NRC Handelsblad.Suppl. 1987. Okt. 7. էջ 1-4:

<sup>5</sup> Stü Forrester J.W. Innovation and the economic long wave// The MacKinsy Quarterly (Spring). 1979. էջ 26-28:

<sup>6</sup> Stü Kleinknecht A. Innovation patters in crisis and prosperity. Schumpeters long cycles reconsidered. L., 1987. XV/III, էջ 235:

ռունը հանգեցրեց արտադրողականության աննախադեպ բարձրացմանը և զանգվածային սպառման հասարակության ձևավորմանը: Այս շրջափուլի հիմնական էներգակիրը նալթն էր, որի պաշարների աստիճանական նվազումը ճգնաժամային իրավիճակ ստեղծեց համաշխարհային տնտեսության մեջ ու հիմքեր նախապատրաստեց կոնդրատսյան հաջորդ շրջափուլի համար:

Եվ վերջապես, 1980-ական թվականներից սկիզբ է առել Կոնդրատսյան հինգերորդ շրջափուլը, որի համար հենքային են համարվում համակարգչային, լազերային, թաղանթային, միկրոկենսաբանական, զենային ճարտարագիտության վրա հիմնված տեխնոլոգիաները: Վերջիններս թույլ են տալիս զանգվածային արտադրությունից, որին բնորոշ են անարդյունավետությունը, թույլ շարժունակությունը, վերակառուցման մեծ դժվարությունները, բնապահպանական վտանգավորությունը և այլն, անցում կատարել մասնագիտացված, ճկուն, հարաշարժ ու բնապահպանական տեսանկյունից անվտանգ արտադրության եղանակների՝ դրանք կենտրոնացնելով ոչ մեծ կամ միջին չափերի ձեռնարկություններում: Այս փուլում հասարակության և տնտեսության հարաճուն պահանջմունքները տեղեկատվության նկատմամբ բավարարվում են ավելի ամբողջական և ծավալուն ձևով: Հինգերորդ Կոնդրատսյան շրջափուլի բազային արտադրական ռեսուրսներ են համարվում գիտելիքը և տեղեկատվությունը: Ցանցային և ինտերնետային տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը հնարավորություն են տալիս բազմապատիկ անգամ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը:

Կորդիինացիոն ճգնաժամն առկա է, երբ համակարգի վերահսկողական կառուցվածքը փոփոխության չի ենթարկվում, սակայն համակարգի արժեչափերի միմյանց համապատասխանեցումը լուրջ հիմնախնդիրների հետ է կապված: Մակրոտնտեսական իմաստով տնտեսական համակարգի վերահսկելիությունը ապահովելը այս պայմաններում կառավարության համար դառնում է խիստ դժվար լուծելի խնդիր: Կորդիինացիոն ճգնաժամի տարիմաստությունը նրանում է, որ կառավարությունը այս իրավիճակում փորձում է ելք գտնել՝ ուժեղացնելով տնտեսության մեջ կոշտ միջամտությունները և վերահսկողական գործառնությունները, ինչը, իր հերթին, ենթադրում է պետական ապարատի ուռճացում, պետական ծախսերի ավելացում, որի հետևանքով էլ ավելի է վատթարանում իրավիճակը: Կորդիինացիոն ճգնաժամի հարուցած ամենալուրջ խնդիրն այն է, որ այդ պայմաններում տեխնոլոգիական առաջընթացը, հետազոտությունն ու տեխնիկական զարգացումը սկսում են ետ մնալ, աշխատուժի վերաորակավորման խթանները և նորամուծությունների հետ առնչվող ձեռնարկումները թուլանում են:

Կորդիինացիոն ճգնաժամի դեպքում կառավարությունների մոտ մեծանում է ազգային տնտեսության անմրցունակության խնդիրները և թուլությունները արտաքին պարտքի ավելացման միջոցով լուծելու գալթակորությունը: Քանզի թվում է, թե այդ ճանապարհը կարող է սեփական արտադրական ենթակառուցի արդիականացման երաշխիք հանդիսանալ ու լավագույն դիրքեր ապահովել միջազգային շուկաներում: Սակայն, իրականում, ինչպես հաճախ պատահում է, արտաքին պարտքի մեծացումը առաջ է բերում փոխառնված դրամական միջոցների անարդյունավետ վերաբաշխում՝ հասարակական տնտեսությունների և վարչական կառույցների օգտին, ծնում և խրախուսում է պետական միջոցների յուրացումները: Միևնույն ժամանակ, պարտքային ճգնաժամը կարող է հանգեցնել տարադրամային պաշարների հյուծման և գերարժեզրկման երևույթներին:

Եթե վերը նկարագրված հաստատագրումները արտապատկերենք Հայաստանի վրա, ապա այստեղ կգտնենք բազմաթիվ ընդհանրություններ ու նմանություններ: Ներկայիս Հայաստանի բազմաթիվ իրողություններ արտացոլում են ինչպես Կառուցվածքային, այնպես էլ Կորոլինացիոն ճգնաժամի համապատկերը: Այդ շրջանակների մեջ է տեղավորվում նաև նորանկախ Հայաստանի Հանրապետության իրար հաջորդած՝ մեկ տասնյակից ավելի կառավարությունների վարքագիծն ու գործելակերպը: Հասարակության ընկալումները, կառավարության և տարատեսակ ընտրախավերի ընդունած տարաբնույթ որոշումների ու կատարած քայլերի նկատմամբ հասարակության արձագանքը նույնպես տեղավորվում է այդ տրամաբանության շրջանակներում: Այժմ դիտարկենք այս խնդիրները ավելի հանգամանալի կերպով:

#### 4. Ճգնաժամի մարտահրավերները և ՀՀ ճնշման հիմնախնդիրները

Համաշխարհային ճգնաժամների փորձի վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ 1970-80-ական թվականներին ինչպես ԽՍՀՄ-ը, այնպես էլ համաշխարհային տնտեսությունն ամբողջությամբ վերցրած, գտնվում էր Կոնդրատևյան շրջափուլի՝ չորրորդից հինգերորդին անցման շրջանում: «Մեծ շրջափուլերի» տեսությամբ նկարագրվող բազմաթիվ իրողությունները այդ ընթացքում բնորոշ էին զարգացած արդյունաբերական երկրների մեծամասնությանը: Մասնավորապես, անկման ու լճացման փուլում էր գտնվում գյուղատնտեսությունը, ԽՍՀՄ-ում և Արևմուտքի զարգացած երկրներում ի հայտ էին եկել կառուցվածքային լուրջ անհամամասնություններ: Հատկապես ԽՍՀՄ տնտեսության և քաղաքական համակարգի 1940-1980-ականների զարգացումները վկայում էին, որ այդ շրջանում տեղի ունեցած տնտեսական աճի «հետագիծը» անհրաժեշտաբար պահանջում է նախապատրաստել տնտեսական և քաղաքական համակարգերը՝ հինգերորդ շրջափուլի մարտահրավերներին համարժեքորեն արձագանքելու համար: Չի կարելի ասել, թե այս իրողությունները այն օրերի ԽՍՀՄ ղեկավարները չէին գիտակցում, այլապես մեկը մյուսին հաջորդած բարեփոխումների պարբերական փորձեր չէին անի: Դա է հաստատում մասնավորապես Ն. Կոսիգինի բարեփոխական կառավարության կասեցված փորձը՝ 1960-ական թվականների երկրորդ կեսին: Կամ էլ՝ 1980-ական թվականների երկրորդ կեսին ԽՍՀՄ վերջին ղեկավար Մ.Գորբաչովի փորձը «Վերակառուցում» անվան տակ:

Թերևս, արված դիտարկումների հիմա վրա կարող ենք պնդել, որ նորանկախ Հայաստանի Հանրապետության տնտեսության վերջին տասնամյակների բացասական իրողությունները, այլ պատճառների հետ մեկտեղ, նաև Կոնդրատևյան շրջափուլերով նկարագրվող պահանջների ու դրանց համարժեք քաղաքականության անտեսման արդյունք են: Փաստորեն, 1940-1980-ական թվականներին Հայաստանում ստեղծվել էին Կոնդրատևյան 4-րդ շրջափուլով նկարագրվող գրեթե բոլոր տեխնոլոգիաները՝ միջուկային էներգետիկա, օրգանական սինթեզի նվաճումների վրա հիմնված նախաքիմիական արդյունաբերություն, ավտոմեքենաշինություն, հաշվողական տեխնիկայի նախագծում ու ստեղծում և այլն: Այլ խնդիր է, որ վարչակենտրոնացված տնտեսության փակ ու ձեռախեղված արժեչափերի համակարգում հնարավորություն չկար այդ տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրությունները համաչափելի ու մրցունակ դարձնել՝ համաշխարհային շուկայի չափանիշներով:



Ուստի ակնհայտ էր, որ անցումը Կոնդրատևյան հիմնադրոցի շրջափուլին շատ ավելի լուրջ մախապատրաստական քայլեր է պահանջում՝ նկատի ունենալով ոչ միայն վերջինիս բնորոշ բարձր տեխնոլոգիաների զարգացման, այլև համապատասխան ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման պահանջները: Կարելի է պնդել, որ ԽՍՀՄ քաղաքական և տնտեսական համակարգը կազմաքանդվեց ու փլուզվեց հիմնականում այն պատճառով, որ ի գործ չէր համարժեքորեն դիմագրավել Կոնդրատևյան հիմնադրոցի շրջափուլի ալիքի հարվածները և ժամանակին արդիականացնել գաղափարախոսական, քաղաքական, տեխնոլոգիական և տնտեսական համակարգերը:

Նորանկախ Հայաստանի պարագայում ճգնաժամերին դիմակայելու ու դրանց մարտահրավերներին համարժեքորեն արձագանքելու հնարավորությունները, կարծում ենք, շատ ավելի սահմանափակ են: Համակարգային տնտեսաքաղաքական և ինստիտուցիոնալ վերափոխումների փուլում գտնվող երկրի համար սեփական ուժերով կայունության ու, առավել ևս, զարգացման ռեսուրսներ ստեղծելը չափազանց բարդ է, եթե ոչ՝ անհնար: Առանց արտաքին օգնության կամ հայկական Մփյուռքի մեծածավալ ներդրումների ու նվիրատվությունների այն իրականացնելը չափազանց դժվար լուծելի խնդիր է: Ներկայումս համաշխարհային տնտեսությունը կաթվածահար արած ճգնաժամը հաստատում է այդ իրողությունը:

2008թ. ճգնաժամը արտաքուստ ծագեց համաշխարհային ֆինանսական շուկաներում, ավելի սուույ՝ ԱՄՆ-ի անշարժ գույքի շուկայում: Ասել, թե այն անսպասելի էր, հանկարծակի, անշուշտ, ճիշտ չի լինի: Նախ՝ այն պատճառով, որ այս ճգնաժամին մատրոն էր 1990-ական թվականներին տեղի ունեցած ճգնաժամերի որոշակի հերթագայությունը, որոնցից առավել գործունը 1997-1998թթ. ասիական ճգնաժամն էր և դրան հաջորդած տեղական բնույթի մի շարք այլ տնտեսական ցնցումները:

Այս պայմաններում համաշխարհային դրամատիրական համակարգի տեսաբանները և նրա հիմնական «խաղացողները» սկսեցին հռեետետորեն գնահատել իրավիճակից դուրս գալու հնարավորությունները: Մասնավորապես, համաշխարհային ֆինանսական համակարգի հենասյուներից մեկը՝ Ջ. Սորոսը, նույնիսկ ճգնաժամերի մի յուրօրինակ տեսություն մշակեց ու փորձեց իրավիճակը շտկելու դեղատոմսեր առաջարկել: Ջ. Սորոսի տեսանկյունից՝ ժողովրդավարությունն ու կապիտալիզմը միշտ չէ, որ ձեռք ձեռքի տված են գնում: «Ժողովրդավարությունը կապիտալիզմին հարկավոր է իբրև հակակշիռ, քանի որ ինքնին կապիտալիստական համակարգը հավասարակշռամետություն չի դրսևորում: Կապիտալի տերերը ձգտում են առավելագույնի հասցնել իրենց շահույթը», - գրում է Ջ. Սորոսը իր «Համաշխարհային կապիտալիզմի ճգնաժամը» աշխատության մեջ<sup>7</sup>: Ըստ Ջ. Սորոսի, ճգնաժամի հիմնական պատճառը «շուկայական արմատականությունն է» (ֆունդամենտալիզմը), ասել է թե՛ կույր հավատը շուկաների ամենագործության ու դրանց ինքնակարգավորվելու ունակության նկատմամբ: Այսպիսի մտածելակերպը անկայուն և անկենսունակ է դարձրել համաշխարհային դրամատիրական համակարգը, ընդ որում, ըստ Ջ. Սորոսի, շուկայական արմատականությունը ավելի մեծ սպառնալիք է բաց հասարակության համար, քան որևէ ամբողջատիրական գաղափարախոսություն<sup>8</sup>: Համաշխարհային շուկաներում

<sup>7</sup> Տե՛ս Ջ. Սորոս, Համաշխարհային կապիտալիզմի ճգնաժամը. Բաց հասարակությունը վտանգված է, Երևան, «Նաիրի», 2000թ., էջ 29:

<sup>8</sup> Տե՛ս նշվ. աշխ. էջ 21-23:

արված գործարքներով աննախադեպ հարստություն դիզած այս հանրահայտ «ֆինանսական գուրուն», ի վերջո, հանգել է այն մտքին, որ ճգնաժամերին հաջողությամբ դիմագրավելու համար պետք է կարգավորել շուկաները, բարձրացնել երկրների կառավարությունների ու միջազգային ֆինանսական և քաղաքական կառույցների դերն ու սոցիալական պատասխանատվությունը, նրանց գործունեությունը դարձնել թափանցիկ ու հաշվետու, ամրապնդել և ապահովել ընդունվող որոշումների ժողովրդավարական ընթացակարգը<sup>9</sup>: Սակայն, ըստ Ջ. Սորոսի, այս լուծումներն էլ չեն երաշխավորում լիակատար հաջողությունը ցնցումների ու ճգնաժամերի դեմ պայքարում, որոնցից տուժում են հատկապես թույլ, համակարգային տնտեսաքաղաքական բարեփոխումներ իրականացնող, ինչպես նաև՝ անցումային շրջանում գտնվող երկրները<sup>10</sup>:

Նմանօրինակ երկրներում համաշխարհային ճգնաժամը, որն իր բնույթով շրջափուլային ճգնաժամ է, դրսևորվում է ուրույն ձևով: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության պարագայում շրջափուլային ճգնաժամը համադրվում է կառուցվածքային և կոորդինացիոն ճգնաժամերի հետ: Այս հանգամանքը էլ ավելի է մեծացնում հնարավոր կորուստների չափը, իսկ նրա հեռահար հետևանքները կարող են էլ ավելի ավերիչ լինել: Արդեն կասկածից վեր է, որ Հայաստանը 2008թ. կեսերից սկիզբ առած համաշխարհային տնտեսական ճգնաժամի հարվածներից լուրջ կորուստներ է կրել. կրճատվել են արտաքին մասնավոր դրամական փոխադրումները, էապես նվազել են արտաքին և ներքին ներդրումները, կրճատվել են արտադրության և արտահանման ծավալները, և իբրև հետևանք՝ անկում են ապրել պետական բյուջեի հարկային մուտքերը, աճել է գործազրկության մակարդակը ոչ միայն Հայաստանում, այլև արտագնա աշխատանքի մեկնած անձանց շրջանում: Պաշտոնական դիտանկյունով՝ տարեկան կտրվածքով ակնկալվում է երկրի համախառն ներքին արդյունքի 5,8 տոկոսի անկում, այնինչ ներկա դրությամբ ՀՆԱ անկումը կազմել է 9,7 տոկոս: Անկախ փորձագիտական շրջանակների գնահատականներով, այդ անկումը փաստացի կարող է կրկնակի չափով ավելին լինել և հասնել մինչև 20 տոկոսի:

Ճգնաժամի ծավալման պայմաններում, կարելի է ասել, զոնե սկզբնական ժամանակահատվածում, ՀՀ կառավարության վարքագիծը տարօրինակ դրսևորումներ ունեցավ, այն է՝ փորձ արվեց թաքցնել ճշմարտությունը ... խուճապից խուսափելու համար: ՀՀ թերզարգացած ֆինանսական ու կորպորատիվ արժեթղթերի շուկաների պայմաններում այդպիսի վարքագիծը ավելի քան կասկածահարույց էր: Նման հայտարարությունները, կարելի է ենթադրել, արվում էին ավելի շուտ ներքաղաքական շահաբաժիններ կորզելու, քան թե ներդրողներին դրական ազդակներ հաղորդելու նկատառումներով: «Մեզ մոտ ճգնաժամ չկա» առասպելը, իհարկե, հորինվել էր նաև այսպես կոչված՝ «երկրորդ սերնդի» բարեփոխումների թեզը ինչ-որ կերպ գունազարդելու համար:

Մինչդեռ ակնհայտ էր, որ Հայաստանում ճգնաժամը դրսևորվում է բյուջեի պակասորդային ֆինանսավորման կտրուկ աճի, ծախսերի կրճատման, կապիտալ շինարարության ծրագրերի սառեցման, ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի խափանման տեսքով: ՀՀ տնտեսության իրական հատվածում բավականին սուր խնդիրներ ունեն լեռնահանքային ու քիմիական արդյունաբերությունը և մետալուրգիան, աղամանդագործությունը, շինարարությունը և շինանյութերի արտադրությունը: Սակայն, որքան էլ տարօրինակ է,

<sup>9</sup> Տե՛ս նշվ. աշխ. էջ 294-295:

<sup>10</sup> Տե՛ս Дж. Сорос. Гипотеза о сверхкрузыре. [www.nnm.ru/searchru/search?q=coproc&in](http://www.nnm.ru/searchru/search?q=coproc&in)

լուրջ գնաճը բացակայում է: Եվ դա հասկանալի է, քանի որ միջազգային շուկաներում տեղի է ունենում ներմուծվող ապրանքների, առաջին հերթին՝ սննդամթերքի գների անկում, ինչը ներմուծման գների աճը զսպող հիմնական գործոնն է:

ՀՀ բանկային հատվածում ևս լուրջ խնդիրներ կան. տոկոսադրույքների աճը, տնտեսության վարկավորման ծավալների կտրուկ կրճատումը, սպեկուլյատիվ միտումների ու ժեղացումը ավելացրել են արտարժույթով վարկավորման ծավալները, ինչը լրջորեն մեծացնում է ռիսկերը: Ակնհայտ է, որ միջազգային ֆինանսական կառույցները, տրամադրելով արտաքին որոշակի ֆինանսավորում, էլ ավելի են ուժեղացնելու պայմանագրային ճնշումները՝ ստիպելով շարունակել դրամի փոխարժեքի արհեստական զսպման քաղաքականությունը, ինչը, սահմանափակելով տեղական արտադրության ու արտահանման հնարավորությունները, լուրջ հիմնախնդիրներ է հարուցելու երկրի տնտեսության մրցունակության տեսանկյունից :

Փաստորեն, այն իրավիճակը, որ ստեղծվել է ՀՀ բյուջետային հատվածում, կարելի է գնահատել մեկ բառով՝ պետական սնանկության (դեֆոլտի) սպառնալիք: Պետական բյուջեի եկամուտները հավաքվում են մեկ երրորդով, ծախսերն էլ կատարվում են ծրագրվածի ընդամենը մեկ երրորդի չափով: ՀՀ օրենքները այս իրավիճակում ենթադրում են բյուջեի կրճատում, սակայն նման բան մենք չենք տեսնում: Տեղի է ունենում ծախսերի կամայական վերատեղաբաշխում՝ հաջորդ ժամանակաշրջանների վրա: Դատելով ամենից, ՀՀ կառավարության հակաճգնաժամային քաղաքականությունը իրավիճակային է և ուղղված է կարճաժամկետ խնդիրների լուծմանը: Ավելին՝ այն լուրջ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում, հետևաբար տևական ժամանակահատվածում կարող է էլ ավելի խորացնել ճգնաժամը:

Այդպիսիք են, օրինակ, կառավարության որոշումները այս կամ այն մասնավոր ընկերությանը տրամադրվող վարկային երաշխիքների կամ ուղղակի օժանդակությունների վերաբերյալ: Դրանք, հասկանալի է, կարող են տրամադրվել միմիայն այն ընկերություններին, որոնք կառավարության քաղաքականության նկատմամբ լոյալ են կամ ապահովում են նրա գործունեության քաղաքական աջակցությունը: Կառավարությունից աջակցություն ստացող ընկերությունների այս խմբին պայմանականորեն կարելի է «կառավարության բարեկամներ» անվանել: Կառավարությունը միջազգային դոնորներից և բարեկամ երկրներից վարկային միջոցներ ստանալով, փոքր ու միջին բիզնեսի բնագավառին վարկեր է հատկացնում՝ մրցակցելով բանկային համակարգի հետ, որն, ի դեպ, եթե հավատալու լինենք կառավարության և բանկային շրջանակների հավաստիացումներին, միջոցների պակաս (լիկվիդայնություն) չունի:

Մյուս կողմից՝ հարկային վարչարարության ուժեղացմամբ, մասնավորապես, արտադրական խոշոր ընկերություններին հարկային տեսուչներ ամրագրելով ու ստվերի դեմ պայքարի դրոշմ պարզելով, կառավարությունը դիմում է փաստացի հարկային բեռը բարձրացնելու քայլին, ինչը նշանակում է խաղի կանոնների փոփոխություն: Եթե երկարաժամկետում տեղի է ունեցել հարկերի թերհավաքագրում, ապա ստվերը կարելի էր կրճատել միայն ու միայն հարաբերականորեն կայուն իրավիճակում, իսկ ճգնաժամի պայմաններում առնվազն կարճատեսությամբ է հարկային բեռի փաստացի բարձրացումը: Որպես կանոն, հակաճգնաժամային միջոցառումների փաթեթները ենթադրում են հարկային բեռի թեթևացում, որպեսզի գործատուները, բավարարվելով գոնե նորմալ շահույթով, չփակեն աշխատատեղերը:

Ճգնաժամի պայմաններում ՀՀ Կենտրոնական բանկը հարկադրված է իր գործունեությունը ծրագրել եռամսյակներով, ուստի չնչին չափով իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ նպատակ ունենալով խթանել տնտեսական աճը: Սակայն ակնհայտ է, որ արտադրական ընկերությունների ներդրումային ռիսկերը ավելի շուտ կապված են ոչ այնքան «թանկ» փողի (բարձր տոկոսադրույքի), որքան պահանջարկի բացակայության ու շուկաների կաթվածահար վիճակի հետ: Այդուհանդերձ, այդ ռիսկերը կապված են նաև ազգային դրամի արհեստականորեն պահվող բարձր փոխարժեքի հետ, ինչի հետևանքով խիստ սուժում են արտադրությունն ու արտահանումները:

Սակայն ներկա ճգնաժամը հեռանկարային առումով արձանագրեց նաև դրական միտումներ: Ըստ էության, վերջ դրվեց դրսից, հատկապես Ռուսաստանից էժան և առատ փողեր ստանալու սովորույթին: Աշխատանքային միգրանտների փողերը, որոնք ՀՀ տնտեսության մակրոտնտեսական պահանջարկաստեղծ հիմնական գործոնն էին, այսօր դադարել են այդ գործառույթը կատարելուց: Դրանով հանդերձ, ճգնաժամը նաև արդիականացման հնարավորություն է, քանզի աշխարհում ավելացել է այն կապիտալը, որը այսպես ասած՝ «խարիսխ» չունի կամ էլ կորցրել է այն և փնտրում է մրցունակ ծրագրեր, որպեսզի ֆինանսավորի: Այս պայմաններում կշահի այն երկիրը, որը կկարողանա մրցունակ ներդրումային պայմաններ ու գալթակողիչ բիզնես միջավայր առաջարկել այսպես կոչված՝ ռիսկային (վենչուրային) կապիտալին:

Հայաստանում ձևավորված կլանային-օլիգարխիկ տնտեսությունը, ըստ էության, արտոնությունների վրա հիմնված համակարգ է: Նաև այս պատճառով է, որ ազգային տնտեսությունը գուրկ է մրցունակությունից: Այն, որ աղետալի չափերով խորանում է տնտեսության արտահանման ու ներմուծման հատվածների միջև տարբերությունը, թերևս միայն նրանից չէ, որ ազգային դրամի փոխարժեքը նպաստավոր չէ (չնայած այդ գործոնի ազդեցությունը ևս լուրջ է): Գլխավոր պատճառը, կարծում ենք, արտոնությունների այն համակարգն է, որը բարձր իշխանությունը տրամադրում է խոշոր կապիտալի ներկայացուցիչներին: Նրանք էլ ավանդական և դրսի շուկաներում գրեթե հետաքրքրություն չպարունակող ապրանքներ են արտադրում, որոնք ավելացված արժեքի շատ փոքր մասնաբաժին են պարունակում և, ըստ էության, հիմնական շեշտը դնում են գերշահութաբեր ներմուծումների վրա: Իսկ երբ արտոնություն ունես, տնտեսական շահույթ քամելու համար ամենևին էլ ջանքերի լարում, առավել ևս՝ նորանուծություն հարկավոր չէ: Այս տեսանկյունից հայ օլիգարխները ոչնչով չեն տարբերվում միջնադարի ավատատերերից, որոնք եկամուտ էին ստանում սոսկ այն բանի համար, որ ունեին իշխանության կողմից շնորհված տիտղոսներ ու արտոնություններ: Իսկ որտեղ գերիշխում են քաղաքական «տանիքի» տակ գործող տնտեսական մենաշնորհները՝ կլանելով շատ թանկ ու ասհմանափակ ռեսուրսները, այնտեղ չեն կարող զարգանալ նորանուծություններն ու բարձրտեխնոլոգիական արտադրությունները: Իսկ եթե նորանուծություններ չկան, ապա աշխատատեղերի, հետևաբար և՛ բարձր եկամուտների ու կենսամակարդակի ապահովման խնդիրները չեն լուծվի:

Կարելի է նկատել, որ ճգնաժամի գործոնը վերջակետ է դնում նաև նախորդ տարիների՝ ՀՆԱ երկնիչ թվով աճի պատրանքին, որը հիմնված էր բացառապես մասնավոր դրամական փոխանցումների (տրանսֆերտների), ավելացված արժեքի շատ փոքր մասնաբաժին պարունակող տնտեսության ճյուղերի վրա՝ ակնագործություն, շինարարություն, ծառայություններ և այլն: Ընդ որում, ՀՀ տնտեսության մեջ մենաշնորհներ են հաստատվել ոչ միայն արտադրու-

թյան և ծառայությունների մատուցման, այլ հատկապես՝ ներմուծման բնագավառում: Դա է պատճառը, որ չնայած միջազգային շուկաներում գների աննախադեպ անկմանը, մեր ներկրողները չեն իջեցրել ներմուծվող ապրանքների ու հումքի, վառելիքի գները:

Պետք է փաստել, որ տարիներ շարունակ ներմուծողների շահերից է բխել նաև դրամի հաստատագրված փոխարժեքի քաղաքականությունը, ինչը հանգեցրել է արտահանման կտրուկ անկմանը, ներմուծման ծավալների բազմապատիկ ավելացմանը, որի արդյունքում վատթարացել է երկրի վճարային հաշվեկշիռը: ՀՀ ներքին շուկայում մենաշնորհների առկայությունը շարունակում է լրջագույն խոչընդոտ մնալ արտաքին ներդրումների համար: Ներմուծման մենաշնորհները, ըստ էության, կազմալուծող ազդեցություն են թողել տնտեսության վրա և այն դատապարտել անմրցունակության: Եթե գործարարը ներմուծման բնագավառում մենաշնորհ ունի, ապա նա երբեք ու երբեք չի մտածի ապրանքն էժան ներմուծելու, էժան ու շատ վաճառելու մասին: Այնինչ, պետությանը ապրանքների թանկացումը ինչ-որ տեղ ձեռնտու է՝ ավելի շատ հարկեր հավաքելու և ՀՆԱ-ի ուռճացված ցուցանիշներ ունենալու համար: Ասել կուզի՝ վերնախավի և մենաշնորհ ունեցող գործարարի շահերն այստեղ ևս համընկնում են:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ ճգնաժամը լուրջ փորձություն է անմրցունակ, շատ մեծ տեսակակար ծախսեր ունեցող Հայաստանի տնտեսության համար: Այն առաջին հերթին հարվածում է տեխնոլոգիապես թույլ, կառուցվածքային և ինստիտուցիոնալ խնդիրներ ունեցող տնտեսություններին: Բայց ճգնաժամը նաև մարտահրավեր է, ավելի ստույգ՝ արդիականացման մարտահրավեր: Հակաճգնաժամային միջոցառումների այն փաթեթները, որոնք առաջարկում են հատկապես զարգացած երկրների կառավարությունները, իսկ մյուս երկրներն էլ փորձում են կրկնօրինակել, իրականում կարճաժամկետ արդյունք են տալու: Իհարկե, դրանք ժամանակավորապես կկայունացնեն ֆինանսական ու վարկային շուկաները, սակայն, ավելացնելով պետական բյուջեի պակասորդը, հանգեցնելու են գների աննախադեպ աճի: Տեղի կունենա գնանկումային (դեֆլյացիոն) և գնաճային (ինֆլյացիոն) զարգացումների համադրում՝ մի երևույթ, որ դեռևս 1974-75 թվականներից հայտնի է լճագնաճային (ստագֆլյացիոն) «ծուղակ» անվանումով, երբ միաժամանակ և՛ գներն են աճում, և՛ գործազրկության մակարդակը: Այս պարագայում տնտեսական իրավիճակի հետագա վատթարացումն անխուսափելի է, իսկ այն շտկելու հնարավորությունները՝ շատ ավելի սահմանափակ:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանի տնտեսության խնդիրները հիմնարար բնույթ ունեն: Դա նախ՝ անմրցունակ տեխնոլոգիական և վերարտադրական կառուցվածքն է: Տարիների ընթացքում ձևավորվել է սպառող տնտեսություն՝ հիմնված կեղծ արժեչափերի վրա: Այդ պատճառով հարկավոր է տեխնոլոգիական արդիականացում և մրցակցային դիրքերի ամրապնդում ու այնպիսի մեխանիզմների ձևավորում, որոնք կբացառեն գերշահույթները շինարարության մեջ, զվարճանքի ոլորտներում, ներմուծման բնագավառում և կհարկադրեն սեփականատերերին՝ ներդրումներ անել նորագույն տեխնոլոգիաների մեջ, ստեղծել բարձր արտադրողական աշխատատեղեր: Հարկավոր է այնպես վերափոխել հարկային համակարգը, որպեսզի էժան աշխատուժը դադարի մրցակցային առավելություն լինելուց: Սակայն այս խնդիրների լուծումը գտնվում է առավելապես քաղաքական հարթության վրա: Հարկավոր է ապամենաշնորհայնացնել տնտեսությունը, վերափոխել քաղաքական ինստիտուտները, պետական կարգավորման ռեժիմները, հարկա-

հավաքը, բիզնեսը անջատել քաղաքականությունից, տնտեսական իշխանությունը՝ քաղաքական իշխանությունից, տնտեսության մեջ արմատավորել մրցակցային հարաբերությունների մշակույթը:

## 5. Ամփոփում և առաջարկներ

Ալնհայտ է, որ ներկա ճգնաժամի շարժառիթների, ազդակների, հնարավոր ազդեցությունների ու հետևանքների հետ կապված պատասխանները պետք է որոնել ոչ միայն տնտեսագիտական մտքի, այլև բազմաթիվ այլ գիտությունների՝ փիլիսոփայության, քաղաքագիտության, սոցիոլոգիայի, հոգեբանության ու բազմաթիվ այլ գիտաճյուղերի «ջրբաժանում»: Ներկա ճգնաժամը իր բնույթով սոսկ ազգային և գլոբալ տնտեսական համակարգերի շրջափոխային տատանման արդյունք չէ, այն ավելի խորն է և կապված է այդ համակարգերի ինչպես կառուցվածքային, այնպես էլ կորորդինացիոն բաղադրիչների խաթարման հետ:

Կարելի է արձանագրել, որ 2008-2009 թթ. ճգնաժամի հիմնական դասձառը Կոնդրասկյան չորրորդ ալիքի սեխնոլոգիաների փնջի վրա հիմնված արտադրականության սահմանափակությունն է, երբ հիմնային ռեսուրսները, ինչպես նաև՝ գործող ինստիտուցիոնալ կարգավորումները ի վիճակի չեն գոյություն ունեցող սեխնոլոգիաների դայնամներում ադապտվել հասարակության շարունակ աճող բարեկեցության սահմանները: Մյուս կողմից էլ Կոնդրասկյան հինգերորդ սերնդի սեխնոլոգիական փնջի զարգացման ու սարածման համար ռեսուրսային և ինստիտուցիոնալ սահմանափակումները լուրջ խոչընդոտ են:

Խնդիրը հատկապես բարդ ու ոչ միանշանակ դրսևորումներ ունի նախկինում վարչակենտրոնացված տնտեսաքաղաքական համակարգ ունեցող երկրներում, որոնք փորձում են ամբողջատիրությունից անցում կատարել ազատ շուկայական և ժողովրդավարական համակարգերի, այն էլ՝ պատմականորեն կարճ ժամկետներում: Այդ անցումը խիստ ծախսատար ու միանշանակորեն դրական արդյունք չենթադրող գործընթաց է, պահանջում է հսկայածավալ ծախսեր նոր ինստիտուտների ձևավորման վրա: Հաջողված ու ցանկալի ելք ապահովող ռեֆորմների ընթացքը ենթադրում է ոչ միայն բարենպաստ միջավայր երկրիներում, այլև համապատասխան արտաքին միջավայր: Սակայն, երբ համաշխարհային տնտեսությունը ներքաշված է գլոբալ տնտեսական ճգնաժամի մեջ, բարեփոխումներ իրականացնող երկրների իշխանությունները պետք է կրկնակի ջանքեր գործադրեն՝ նրա հարվածները մեղմելու և բարեփոխումների դրական ձեռքբերումները պահպանելու համար:

Ալնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության պայմաններում միմյանց են համադրվում ճգնաժամի բոլոր դրսևորումները՝ ԵՐԶփոխային, կառուցվածքային և կորորդինացիոն: Ավելին, ճգնաժամերի թվարկված տեսակներին գումարվում է նաև ինստիտուցիոնալ ճգնաժամը: Վերջինիս պատճառն այն է, որ երկրում ավելի քան երկու տասնամյակ իրականացված տնտեսաքաղաքական բարեփոխումների արդյունքում ըստ էության այդպես էլ լիարժեքորեն չեն ձևավորվել ժողովրդավարական հասարակարգին և ազատ շուկայական տնտեսությանը բնորոշ ինստիտուտները: Բարեփոխական քայլերը, որոնք հարմարեցված ու համապատասխան չեն կոնկրետ ազգային պայմաններին ու միջավայրին, կարող են ձևավորել անարդյունավետ վարքագծի նորմեր կամ, այսպես կոչված՝ «ինստիտուցիոնալ ծուղակներ»: Վերջիններս յուրօրինակ ձևախեղումներ են, որոնք խիստ դժվարացնում,

եթե ոչ՝ կասկածի տակ են դնում բարեփոխումների արդյունավետությունը, առավել ևս, տնտեսության ու հասարակության արդիականացման հեռանկարը:

Ելնելով բարեփոխումների հայաստանյան փորձից՝ կարելի է առանձնացնել այնպիսի ինստիտուցիոնալ ծուղակներ, ինչպիսիք են կոռուպցիան, հարկերի վճարումից խուսափելը, ինքնավերարտադրվող հոռետեսական սպասումները, վճարումների ճգնաժամը և այլն: Անցումային շրջանում, երբ շուկայական տնտեսության և իրավական պետության ինստիտուտները ու հատկապես՝ օրենքները և դրանց գործադրման մեխանիզմները դեռևս լինելիության գործընթացում են, խիստ մեծանում է հավանականությունը, որ կոռուպցիոն հարաբերությունները շատ դեպքերում լինեն ավելի նախընտրելի, քան գործարքներ կնքելու օրինական ճանապարհները:

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիան ըստ էության վերածվել է համակարգային երևույթի՝ ընդգրկելով ոչ միայն տնտեսությունը և տնտեսական գործարքները, այլև քաղաքական համակարգը՝ ներառյալ ընտրական մեխանիզմները, իրավապահ համակարգը, կրթական, առողջապահական հաստատությունները և բազմաթիվ այլ բնագավառներ: Քաղաքական, բարոյական, սոցիալական վնասներից զատ կոռուպցիան լուրջ տնտեսական ռեսուրսներ է կլանում, որոնք, այլ հավասար պայմաններում, կարող էին ծառայել որպես ներդրումների և արդիականացման շոշափելի աղբյուրներ: Այս «կոռուպցիոն ռեսուրսները» ազատվելու դեպքում արտակարգ իրավիճակներում կարող են ծառայել նաև որպես էական հակաճգնաժամային ռեսուրսներ: Որոշ գնահատումներով Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի մինչև 20-25 տոկոսը «կոռուպցիոն շուկայի» օրգանառության ծավալն է, իսկ դա առնվազն 3-4 միլիարդ դոլար է:

Ամփոփելով, կարելի է առաջարկել հակաճգնաժամային քայլերի ու միջոցառումների մի շարք ուղղություններ, որոնք, ամբողջության մեջ, կարող են ոչ միայն մեղմել ճգնաժամի հարվածները, այլև որոշակիորեն նպաստել նրա հաղթահարմանը: Այդ քայլերը նախ և առաջ վերաբերում են երկրի ֆաղափական և ինստիտուցիոնալ համակարգերի առողջացմանը: Հարկավոր է ապաքերականացնել ընտրական մեխանիզմներն ու գործընթացները, դրանք դարձնել բաց ու թափանցիկ, ապաքաղաքականացնել կրթական համակարգը, բանակը, ուժային կառույցները, բացառել վերջիններիս ուղղակի և անուղղակի, թաքնված և բացահայտ միջամտություններն ու ուղղորդումները՝ ընտրությունների նկատմամբ:

ՀՀ հակաճգնաժամային ֆաղափականության օրակարգը բնականաբար պահանջում է լուրջ վերանայումներ, սրբագրումներ և ուղղումներ վարվող տնտեսական քաղաքականության մեջ: Այդ քայլերը ենթադրում են.

-տնտեսության ապամենաշնորհայնացում, ավանդական ճյուղերին և արտադրություններին տրվող հարկային, վարկային, ինստիտուցիոնալ արտոնությունների բացառում,

-բյուջետային քաղաքականության ծրագրավորման և իրականացման մեջ հավելյալ հակաճգնաժամային ռեսուրսների ներգրավման հարցում արտաքին աղբյուրներից շեշտադրման փոփոխություն՝ ներքին աղբյուրների վրա, ինչպես նաև ոչ ողջամիտ, քաղաքական ու այլ կարգի պահանջներով ու պարտադրանքներով ուղեկցվող արտաքին փոխառությունների ստացման բացառում,

-հարկային բեռի թեթևացում, որոշ հարկատեսակների, մասնավորապես ավելացված արժեքի հարկի և շահութահարկի դրույքաչափերի իջեցում (2-4 տոկոսով), եկամտահար-

կի տարբերակում ու պրոգրեսիվ եկամտահարկի սահմանում այն հաշվով, որպեսզի միջինից բարձր եկամտուները հարկվեն ավելի բարձր դրույքաչափով (25-30 տոկոսով),

-հարկատուների տնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության ուժեղացում, սովետային գործարքների նկատմամբ տնտեսական և քրեական պատժամիջոցների խստացում,

-պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վերանայում, պետական կառավարման ապարատի ծախսերի կրճատում,

-պետական բյուջեից առանձին ոլորտներին կամ ընկերություններին լոբբիստական ճնշումների կամ թելադրանքների ազդեցության տակ տրամադրվող հատկացումների դադարեցում,

-հակաճգնաժամային ռեսուրսների հատկացում՝ նորամուծական ու զարգացման ներուժ ունեցող բիզնես նախագծերին՝ բացառապես բաց և թափանցիկ մրցույթների ու կառավարություն ներկայացված ծրագրերի անկախ և պրոֆեսիոնալ փորձաքննությունների հիման վրա,

-դրամավարկային քաղաքականության վերանայում այն հաշվով, որպեսզի դյուրինացվի տնտեսության վարկավորումը, հատկապես փոքր ու միջին բիզնեսի մասով,

-ազգային դրամի փոխարժեքի քաղաքականության վերանայում, որպեսզի այն դառնա նպաստավոր ներքին արտադրության և արտահանման կողմնորոշում ունեցող ընկերությունների համար,

-մասնավոր բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողության ուժեղացում, մասնավոր բանկերի ռեզերվների և ԿԲ սահմանած այլ չափասահմանների (նորմատիվների) վերանայում՝ այն հաշվով, որպեսզի բանկերը շահագրգռված լինեն միավորելու կապիտալները և մեծացնելու իրենց լիկվիդայնության և հուսալիության մակարդակը,

-ապամենաշնորհայնացնել ներմուծումը, պետական բյուջեից արտահանման սուբսիդիաներ տրամադրել այն ընկերություններին, որոնք արտադրում և արտաքին շուկաներ են արտահանում բարձրտեխնոլոգիական, գիտատար ապրանքներ ու ծառայություններ:

**Summary**

**THE EXPERIENCE OF GLOBAL CRISES AND ARMENIA**

*Atom Sh. Margaryan*

Based upon the experience of global financial and economic crises, this article examines the issues surrounding the development of the Republic of Armenia's current financial system. The concept of the modern study of crises is touched upon, in particular, the character of financial crises are discussed, the reason for their emergence, the different stages, and to overcome these, scientific and theoretical issues. Accordingly, a crisis is viewed as one of the stages in the natural development of the national economic cycle.

By classifying crises, cyclical, structural and coordinated crises are identified and studied.



The rise and expansion of Kondratiev waves are discussed. Within the context of observing economic crises, the peculiarities of the manifestation of global financial crises and their influence on the economy of the Republic of Armenia are discussed.

Accordingly, the hypothetical assertion is put forward, that during a global economic crisis, those countries in transition or developing countries are affected more severely, because crises have a cyclical characteristic; added to these are structural, coordinated and institutional crises.

As a result of studying the economic situation in the Republic of Armenia, recommendations are made based upon the conclusions and generalities, the application of which will provide the ability to overcome the crisis or to soften its blow.

These apply not only to political and institutional structures, but also to fiscal and monetary-credit policies.

Լևոն Ե. Լաճիկյան\*

## ԳԱՍԱԿԱՆ ՇՈՒՆՉՔ ԿՏԱՎՆԵՐՈՒՄ

Նման զգացողություն ես ունենում, երբ դիտում ես 2009 թ. հուլիսի 3-ին Հայաստանի նկարիչների միությունում բացված Տիգրան Բարխանաջյանի առաջին ցուցահանդեսը: Երիտասարդ այս նկարիչը ծնվել է 1974 թ. Լենինականում (Գյումրի), ստացել գեղարվեստական հիմնավոր կրթություն նախ՝ տեղի նկարչական դպրոցում, ապա՝ Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան ուսումնարանում և Գեղարվեստի ակադեմիայում: Երբ բնատուր շռայլ օժտվածությունը միանում է կրթության, առավել ևս՝ աշխատասիրության հետ, արդյունքներն, իրոք որ, իրենց երկար սպասեցնել չեն տալիս:

Վկայությունը Տիգրանի տասնյակ աշխատանքներն են, որոնք, առանց չափազանցության, արդեն այսօր հասուն վրձնի արգասիքներ են: Գրանք կա՛ն նատյուրմորտներ են, կա՛ն ֆիգուրատիվ կոմպոզիցիաներ: Գիտելով առաջին ժանրին պատկանող կտավները՝ թվում է, թե հանդիպել ես անցյալի նշանավոր վարպետներից մեկի աշխատանքներին: Խոսքն, իհարկե, նախ և առաջ կատարողական վարպետությանն է վերաբերում:



Տնային պարապմունք

Հեղինակը, վրձնելով դասական շնչի այդ աշխատանքները, կարծես իր առջև նպատակ է դրել հասնելու նյութականության լիարժեք դրսևորման և նկարչական արվեստին կատարելապես տիրապետելու հմտության ցուցադրման: Սա, անտարակույս, ինքնահաստատման ձգտող յուրաքանչյուր արվեստագետի անցնելիք ճանապարհի պարտադիր մի փուլն է,

\* Լևոն Լաճիկյանը հայտնի արվեստաբան է և մշակութային մեկնաբան:

թիվ 1(26) ապրիլ-հունիս 2009

համառոտակազմի հանդես

ՎԼԻՄ

որ Տիգրանն անցնում է վստահ և արժանապատվորեն:

Հակվածությունը դասականի հանդեպ նրա մոտ արտահայտվում է նաև թեմատիկ ընտրության հարցում: Այսպես՝ աստվածաշնչյան սյուժեներով Տիգրան Բարխանաշյանի երկու ստեղծագործություններ հաջողությամբ ցուցադրվեցին Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված հոբելյանական ցուցահանդեսում: Դրանցից առաջինը՝ «Քրիստոսը Պիղատոսի առաջ», կառուցված է այնպես, որ չնայած վերնագրին, բացակայում է Քրիստոսի կերպարը: Նկարը դիտող յուրաքանչյուր ոք ականա «արժանանում» է պատկերված զառամյալ քահանայապետերի և դպիրների նախատական հայացքներին:

Տիգրան Բարխանաշյանի ներկայացրած երկրորդ նկարը, որը կրում է «Խորհրդավոր ընթրիք» անունը, աստվածաշնչյան հայտնի սյուժեի նոր և ուշագրավ մեկնաբանություն է: Դարերի ընթացքում այս թեման ձեռք է բերել պատկերագրական որոշակի կանոններ, ուստի առնվազն ստեղծագործական համարձակություն էր պետք կրկին անդրադառնալու դրան: Այդ կանոններին փորձում է հետևել նաև Տիգրանը: Նրա մոտ ևս վերնատանը գտնվող երկարավուն սեղանի շուրջ բոլորած են Հիսուսն ու նրա 12 աշակերտները: Հեղինակը, սակայն, գնացել է ոչ թե առանձին առաքյալների կերպարների անհատականացման, այլ հավատարմության ու մատուցյալ գաղափարների հակադրության ընդգծման ճանապարհով: Ոչ լրիվ դեմքով, ոչ էլ կիսադեմ չի պատկերված մույնիսկ Հուդան՝ որպես մատուցյալ ու մեղքի կրող: Նա իր մարմնով է փակել լույսի ճանապարհը և ամբողջովին ստվերի մեջ է, եթե չասենք՝ հենց Մուքն է մարմնավորում: Նրա դեմ դիմաց լույսերով ողողուն

Քրիստոսն է՝ որպես Լույսի խորհրդանիշ: Ամբողջ կոմպոզիցիան լուծված է հենց լույսի ու ստվերի հակադրության միջոցով, ինչն առավել խորհրդավորությամբ է պարուրում արժարժվող թեման:

Վերջինիս մեջ հետևողականորեն խրանալու միտումը Տիգրանին բերեց-հանգեցրեց «Խորհրդավոր ընթրիք»-ի նոր տարբերակին, որն էլ դարձավ նրա դիպլոմային աշխատանքը՝ Գեղարվեստի ակադեմիան ավարտելիս: Նախորդի նման այստեղ ևս բուն ընթրիքի պահը չէ. սեղանի վրա չկան ո՛չ հաց, ո՛չ գինու սկահակներ, ո՛չ էլ այլ պիտույքներ: Պատկերվածն ավելի շատ ընթրիքին հաջորդող տեսարանն է, երբ բոլոր աշակերտներն արտաքուստ հանգիստ, բայց ներքին լարվածությամբ նստած են սեղանի շուրջ՝ մտորելով, թե ո՞վ է իրենց մեջ մատնիչը: Դիտողի համար, իհարկե, դժվար չէ առանձնացնել Հուդային, որ շփոթահար կեցվածքով և մեկուսի կանգնած միակ ֆիգուրն է կտավում: Այստեղ նկարիչն անհամեմատ մեղմել է լույսի ու ստվերի հակադրությունը և նկարը կառուցել հիմնականում կիսատոների վրա: Այս տարբերակում, իհարկե, ցանկության դեպքում կարելի է աղերսներ տեսնել ռուս գեղանկարիչ Նիկոլայ Գեի համանուն կտավի կոմպոզիցիոն լուծման հետ: ԽՆդիրը, սակայն, ազդեցություն որոնելը չէ: Այն միանգամայն հասկանալի ու ընդունելի երևույթ է, եթե հաշվի առնենք նկարչի՝ մեծ ճանապարհի սկզբում գտնվելու պարագան:

Կարևորն այն է, որ Տիգրան Բարխանաշյանը չի բավարարվում ձեռքբերածով և անընդհատ փնտրտուքների մեջ է: Դիշտ է, 2002-ին է ավարտել Գեղարվեստի ակադեմիան, բայց արդեն մի ամբողջ նկարաշար է վրձնել՝ խիստ տարբեր նախընթաց շրջանի ստեղծագործություններից թե՛ թեմատիկայով, թե՛ կատարման ոճով: Այդ նկարներում ակնհայտ է հեղի-

նակի ձգտումը դուրս գալու ակադեմիական գեղանկարչության շրջանակներից և գտնելու ինքնադրսևորման նոր ձևեր: Դրանցում առկա է ավելի շատ տրամադրությանն ու զգացմունքներին տրվելու միտումը և ժամանակավոր հրաժեշտը «ճիշտ» նկարելու նախկին կերպին: Ֆիզուրատիվ այդ կոմպոզիցիաները, որ կոչվում են «Առավոտ», «Երաժշտության դաս», «Ընտանիք», «Ունկնդրություն», «Ընթերցանություն» և այլն, իրենցից մի նոր աշխարհ են ներկայացնում՝ գեղարվեստական բոլորովին այլ մտածողությամբ, գրոտեսկային շեշտվածությամբ և վառ, ժանսեմյան զգայաթրթիռ գույներով:

Չնայած ներամփոփ բնավորությանը՝ Տիգրանը սիրում է բազմաֆիգուր կոմպոզիցիաներ վրձնել, բազմամարդ տեսարաններ պատկերել: Այդ նկարները, սակայն, աղմկոտ չեն: Ժխոր չկա դրանցում, այլ լոկ լուռ համաձայնությունն է իշխում պատկերված մարդկանց միջև: Վերջիններս միանման հետաքրքրություն են տալիս՝ դեպի գեղեցիկն ու արվեստը: Նկարչի հերոսները «սիրում են» երաժշտություն ունկնդրել. լսում են սրինգ, ջութակ, թավջութակ, դաշնամուր: Այդ սերն ու երաժշտական տրամադրությունը փոխանցվում են դիտողին, վարակում նրան քնարականությամբ ու գեղեցիկի հանդեպ ընդգծված ուշադրությամբ:

Դրանք, բոլորն անխտիր, սովորական առօրյայի մեջ քնարական-բանաստեղծական ակնթարթներ ու թրթիռներ որոնելու և, ամենակարևորը, գտնելու հաջողված օրինակներ են: Հեղինակն իր հոգու մեղմությունն ու ներքին սերն է փոխանցել իր կտավներին ու դրանց հերոսներին: Դրան-

ցում պարզորոշ արտացոլված է նկարչի կարոտախտը կորսված գեղեցկության, մարդկային ջերմ կապերի հանդեպ: Դժվար է, իհարկե, միանշանակ ասել, թե այդ կերպ երիտասարդ արվեստագետն արդյո՞ք խույս է տալիս մերօրյա կյանքից, թե՞ հայացքն ուղղում է դեպի ետ՝ կորուսյալ գեղեցկությունը կրկին վերագտնելու և ներկան երանելի անցյալով զարդարելու մղումով: Նկարիչը խնդիր չի դնում զաղափարական սևեռման կամ ինչ-որ արտակարգ իրադարձության ցուցադրման: Ընդհակառակը, նրա կտավներին դասական հագուկապով, 17-18-րդ դարերին բնորոշ եվրոպական կենցաղով ապրող մարդիկ են՝ իրենց պարզ առօրյայով և փոխհարաբերություններով: Անսպառ են երևակայական այդ աշխարհի դրսևորումները:

Մեփական մոտեցումներն ի հայտ բերելու հարցում Տիգրան Բարխանաջյանին մեծապես օգնում է կոմպոզիցիաներ կառուցելու նրա հմտությունը: Հեշտ չէ, անշուշտ, նկարչական սահմանափակ տարածքները «բնակեցնել» մեծաթիվ պերսոնաժներով: Հեղինակը կարծես ստեղծում է իր հերոսների թատրոնը, որոնց նա բեմադրում է վարժ ռեժիսորի պես: Իհարկե, նրանցից և ոչ մեկին մոտ չկա հերոսի կամ հերոսանալու կեցվածք, բայց և իրենց պարզության ու անմիջականության մեջ նրանք արժանի են ընդօրինակման:

Թե վաղը ինչ նոր շարունակություն կընտրի Տիգրան Բարխանաջյանը, ժամանակը ցույց կտա: Գլխավորն այն է, որ նա չկտրվի ազգային-դասական այն հիմքից ու արմատներից, որոնք բոլոր ժամանակներում եղել և մնում են մեծ ու ճշմարիտ արվեստի իսկական սնուցիչները:

## CLASSICAL INFLUENCE ON THE CANVASSES

*Levon E. Latchikian*